ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԽՍՀՄ փլուզման հետ մեկտեղ առաջացած ինքնիշխան հանրապետությունները՝ հրաժարվելով կոմունիստական գաղափարախոսությունից և խզելով տարիների ընթացքում հաստատված տնտեսական կապերը, փորձեցին ինքնուրույն լուծել իրենց գոյատևման խնդիրները:

Ընդհանրապես, անկախության հռչակումից հետո՝ անցյալի և ներկայիս բարեկամական, հարևան երկրներ Հայաստանն ու Վրաստանը նույնպես, հաշվի առնելով արդի իրույթները, հայտնվեցին որակապես նոր հիմնախնդիրների լուծման առջև: Ժողովրդավարական պետությունների և քաղաքացիական հասարակությունների կառուցման խստագույն պահանջներ, շուկայական տնտեսության է՛լ ավելի պարտադիր սկզբունքներ, տնտեսական և էներգետիկ բարդությունների հաղթահարում՝ այս բոլոր գործընթացների հաջող և լիարժեք իրականացումը մինչ օրս էլ մեծ ջանքեր է պահանջում Վրաստանի և Հայաստանի իշխանություններից: Ընդ որում, նորանկախ երկրների կառավարությունները, նույնիսկ իրենց պետությունների համար ամենադժվար պահին, չդադարեցին առավելագույն աջակցությունը և փոխօգնությունը՝ ընդհանուր առմամբ, ձգտելով համադրել միայն երկու երկրների համար ընդունելի և արդարացված որոշումներ:

Հարկ է փաստել նաև, որ ԽՍՀՄ կազմալուծումից հետո Հայաստանը և Վրաստանը՝ նորանկախ այլ պետությունների համեմատությամբ, հայտնվեցին ամենածանր կացության մեջ: Երբեմնի կենտրոնացված տնտեսական ընդհանրական բնույթի խնդիրներին գումարվեցին երկրաշարժի հետևանքները, հակամարտությունն Ադրբեջանի հետ՝ դարաբաղյան հիմնահարցի շուրջ, շրջափակումը (Հայաստանի դեպքում), ինչպես նաև վրաց-օսեթական ու վրաց-աբխազական հակամարտությունները (Վրաստանի դեպքում) և այլն: Բացի այդ, Երևանը և Թբիլիսին կորցրեցին վիթխարի շուկաներ, որոնցում նրանք բնութագրվում էին տնտեսական որոշակի հզորությամբ:

Այդպիսի իրավիճակում Հայաստանի և Վրաստանի իշխանությունները նախաձեռնեցին տնտեսության արմատական վերակառուցման գործընթացը: Սակայն հարկ է նշել, որ նման փոխակերպության համար կային բազմաթիվ խոչընդոտներ: Մասնավորապես սկզբնական շրջանում սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացման գործում որոշակի դեր խաղացին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնները՝ կապված երկու հանրապետությունների տնտեսության ճյուղային կառուցվածքի և ռեսուրսային ներուժի առանձնահատկությունների հետ:

Չնայած այս ամենին, Երևանն ու Թբիլիսին ձգտում էին առանձնահատուկ դեր հաղորդել երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման խնդիրներին: Հայ-վրացական տնտեսական համագործակցությանն առնչվող հարցերը մշտապես քննարկվում էին երկու երկրների նախագահների և կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչների միջև տեղի ունեցած բազմաթիվ հանդիպումների և բանակցությունների ընթացքում: Մասնավորապես, 1993թ. մայիսին Հայաստանի և Վրաստանի վարչապետները ստորագրեցին տնտեսական ոլորտին առնչվող մի շարք փաստաթղթեր: Սակայն, ինչպես վերը նշեցինք, արդեն 1990-ական թթ. սկզբներին ի հայտ եկան բազմաթիվ դժվարություններ: Քանզի, բավականին ծանր վիճակում էր գտնվում Վրաստանի տնտեսությունը՝ երկիրը գոյատևում էր բացառապես դոնորպետությունների ֆինանսական և հումանիտար օգնության շնորհիվ[1]: Ընդ որում, 1994թ. սկզբներից Վրաստանի տնտեսական քաղաքականությունը ծրագրում և իրականացնում է Համաշխարհային բանկը[2]: Խորը տնտեսական ճգնաժամ էր ապրում նաև Հայաստանը: Արդյունքում, 1991-1994թթ. ընթացքում տնտեսական համագործակցության մի շարք ոլորտներում հարաբերությունները շատ դանդաղ էին զարգանում, ինչպես նաև լուծում չէին ստանում տնտեսական ոլորտին առնչվող բազմաթիվ հարցեր:

Այս ամենով հանդերձ հարկ է փաստել, որ վերոնշյալ ժամանակաշրջանում գոյություն ուներ մեկ ոլորտ, որը մանրաքննին վերաբերմունք և Հայաստանի ու Վրաստանի կառավարությունների կողմից անվերապահ

---

[1] Տե՛ս "Свободная Грузия", 12.11.1995.

[2] Տե՛ս Нодиа Г., Образ Запада в грузинском сознании, *Этнические и региональные конфликты в Евразии*, общ. ред. Б. Коппитерс, Э. Ремакль, А. Зверев, кн. 3, М., 1997, стр. 175.

լուծումներ էր պահանջում: 1991թ.՝ մինչ լայնածավալ ռազմական գործողությունների սկիզբը Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանը դադարեցրեց նավթամթերքների առաքումը Հայաստան և փակեց խողովակաշարը, որով Հայաստանը գազ էր ստանում Ռուսաստանից: Այնուհետև, Ադրբեջանի կողմից լիակատար շրջափակում հայտարարվեց Հայաստանին, իսկ 1993թ. գարնանը Ադրբեջանին միացավ նաև Թուրքիան: Այսպիսի պայմաններում, Վրաստանը Հայաստանի համար դառնում էր արտաքին աշխարհի հետ կապող միակ օղակը. Ռուսաստանից բեռնային և ուղևորային ողջ փոխադրումները, ինչպես նաև արևմտյան երկրներից առաքումներն (իսկ առաջին տարիներին նաև ամբողջ մարդասիրական օգնությունը) կատարվում էին բացառապես Վրաստանի տարածքով: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ հարավ-օսեթական և աբխազական հակամարտությունների հետևանքով փակվել էին Ռուսաստանից եկող երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհները, որոնք անցնում էին Վրաստանի տարածքով (ինչը ծանր հետևանքներ ունեցավ նաև Վրաստանի համար՝ 1994թ.-ին ՀՆԱ-ի աճը կազմեց 4%)[3]:

Ընդհանրապես, Վրաստանի հետ տնտեսական հարաբերություններում վերջինիս տարածքով տարանցիկ փոխադրումների հետ կապված խնդիրները, ի սզբանե, Հայաստանի համար հույժ կարևոր էին: Դրա մասին էր խոսում նաև այն փաստը, որ Հայաստան էներգակիրների առաքման, Վրաստանի տարածքով անխափան և անվտանգ երկաթուղային կապի ապահովման խնդիրները դառնում էին Երևանի և Թբիլիսիի միջև բազմաթիվ քննարկումների առարկա: 1993թ. մայիսին երկու երկրների վարչապետների կողմից ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև տարանցիկ փոխադրումների հիմնական սկզբունքների» մասին համաձայնագիրը[4] և մի շարք այլ փաստաթղթեր: Ընդ որում, վերոհիշյալ հարցերը քննարկվել են գրեթե բոլոր հանդիպումների ընթացքում:

Այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ չնայած Վրաստանի տարածքով Հայաստանի համար նախատեսված բեռների տարանցիկ փոխադրման համար վրացական իշխանությունների կողմից նախաձեռնվող որոշակի քայլերին,

---

[3] Տե՛ս "Свободная Грузия", 23.01.1998.

[4] Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու (1991-1995թթ.), *ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր*, N 1, Ե., 2002, էջ 160-162:

որոնք սկզբնական շրջանում հեշտ չէին ձեռք բերվում կապված Վրաստանում առկա քաղաքացիական կռիվների հետ, երկու երկրների միջև հաճախ բարդություններ էին առաջանում վերոհիշյալ խնդրի առնչությամբ: 1990-ական թվականների սկզբներին Հայաստանի իշխանությունները բազմիցս դժգոհություն են հայտնել, որ մարդասիրական և այլ բեռների մեծ մասը թալանի է ենթարկվում Վրաստանի տարածքում[5]: Ընդ որում, այդ շրջանում հաճախակի բնույթ էին ստացել դիվերսիոն գործողությունները և ավազակային խմբերի հարձակումները տրանսպորտային միջոցների վրա: Արդյունքում, 1992-1995թթ. ընթացքում, Վրաստանի տարածքով դեպի Հայաստան անցնող երկաթուղային ճանապարհը պայթեցվել է 30 անգամից ավելի, 7 անգամ քանդվել է Խրամ գետի վրայով անցնող կամուրջը, որը, ի դեպ, կապող օղակ էր հանդիսանում հարևան հանրապետությունների միջև[6]: Հատկանշական է, որ 1994թ.-ի դեկտեմբերին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանն Ադրբեջանի նախագահ Հ.Ալիևի հետ կայացած հանդիպման ընթացքում՝ անդրադառնալով վերոհիշյալ կամուրջի պայթեցումներին, նշեց, որ «այդ ամենը կատարվում է ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից...»[7]:

Չնայած այս ամենին, նշենք, որ 1994թ. վերոհիշյալ հարցն երկու կողմերի միջև հատուկ քննարկման նյութ դարձավ: Մասնավորապես, պայմանավորվածություն ձեռք բերվեց գնացքների անվտանգությունը և բեռների պահպանումն ապահովող երկաթուղային ծառայությունների աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Բացի այդ, կողմերը համաձայնեցին համապատասխան միջոցներ նախաձեռնել՝ սահմանելու Վրաստանի տարածքում անհետացած և կողոպտված բեռների արժեքները, ինչպես նաև համաձայնություն ձեռք բերվեց՝ բոլոր վնասները Վրաստանի կողմից փոխհատուցելու մասին[8]:

---

[5] Տե՛ս Գազանճեան Կ., Հայաստանի Հանրապետության առաջին տարիները. շաբաթական թղթակցությունների հավաքածու, Բեյրութ, 1997, էջ 83-85:

[6] Տե՛ս Шилова Р., Армения-Грузия: добрососедство и связь с внешним миром, *Армения: проблемы независимого развития*, под ред. Е. Кожокина, РИСИ, М., 1998, стр. 474.

[7] Covcas Bulletin. Nationalities-Conflicts and Human Rights in the Caucasus, Geneva/Washington, Vol. IV, N 24, 21.11.1994.

[8] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 04.05.1994:

Այս ենթատեքստում հարկ է նշել, որ 1990-ական թվականներին Հայաստանի համար հույժ կարևոր էր նաև Վրաստանի տարածքով բնական գազի կայուն և բնականոն փոխադրման ապահովումը: Կանոնավոր գազամատակարարման համար լուրջ խոչընդոտ էին հանդիսանում գազամուղի վրացական տարածքով անցնող հատվածում 1992-1994թթ.-ի ընթացքում տեղի ունեցող հաճախակի պայթեցումները և վթարները[9]: Ի դեպ, հատկանշական է, որ գրեթե ամեն անգամ գազի ծավալներն ավելանում էին՝ Հայաստանի պետական այրերի Թբիլիսի կատարած այցերից հետո (այդպես էր, օրինակ, 1992թ. հոկտեմբերին, երբ Լ.Տեր-Պետրոսյանը ժամանել էր Թբիլիսի և այլն)[10]:

Հաճախակի դիվերսիաների հիմնական պատճառ էր հանդիսանում նաև այն, որ գազամուղն անցնում էր Վրաստանի հարավային շրջաններով (Մառնեուլի և Գարդաբանի), որոնք հիմնականում բնակեցված էին ադրբեջանցիներով[11]: Վերը նշված դիվերսիաների արդյունքում՝ 1992-1995թթ. ընթացքում Հայաստան բնական գազ չի մտել ընդհանուր առմամբ 200 օր: Այսպիսի պայմաններում հայկական իշխանությունները պահանջում էին որպեսզի Վրաստանն ապահովի գազամուղի անվտանգությունը: Իսկ վրացական կողմը վճռականապես հերքում էր բոլոր այն մեղադրանքները, որտեղ նշվում էր, որ Թբիլիսին կանխամտածված չի ցանկանում ապահովել գազամուղի անվտանգությունը և ավազակային խմբերին թողնում է անպատիժ[12]: Այս համատեքստում հարկ է հիշատակել է.Շևարդնաձեի 1994թ. դեկտեմբերին Աշխաբադում արված հետևյալ հայտարարությունը՝ «...ելնելով մի շարք հանգամանքներից՝ վրացական իշխանությունները չեն կարող վերահսկել գազամուղն ամբողջությամբ»[13]: Այնուամենայնիվ, փաստենք, որ Հայաստանի կողմից արված բազմաթիվ բողոքների արդյունքում՝ միջոցներ ձեռնարկվեցին

---

[9] Տե՛ս Hunter T., The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflict, CSIS, Washington, D.C., 1994, p. 50-51թ

[10] Տե՛ս «Ազգ», 06.01.1993:

[11] Մառնեուլիի շրջանում ադրբեջանցիները կազմում են բնակչության 70%-ը:

[12] Տե՛ս Astrian H., Bad Oil, Bad Blood, *AIM*, April 1994, p. 12-13.

[13] Кухианидзе А., Армянское и азербайджанское меньшиства в Грузии, *Этнические и региональные конфликты в Евразии*, общ. ред. Б. Коппитерс, А. Малашенко, Д. Тренин, кн. 1, М., 1997. стр. 174.

գազամուղի առավել խոցելի հատվածներում զինված պահպանության կազմակերպման ուղղությամբ[14]:

Փաստացի նյութերի վերլուծությունը վկայում է, որ հայ-վրացական տնտեսական համագործակցությունն այլ ոլորտներում 1990-ական թթ. ընթացքում զգալի զարգացում չարձանագրվեց, չնայած այդ խնդիրները պարբերաբար քննարկվում էին միջկառավարական բանակցությունների և բարձրաստիճան հանդիպումների ընթացքում: Մասնավորապես, բավականին համեստ հաջողություններ գրանցվեցին երկու երկրների առևտրի զարգացման ոլորտում: Վրաստանից Հայաստանի ներմուծման և Վրաստան արտահանման ապրանքաշրջանառության ցուցանիշները զգալիորեն զիջում են Ռուսաստանի և Թուրքմենստանի հետ ունեցած Հայաստանի ապրանքաշրջանառության ցուցանիշներին: Այսպես, օրինակ՝ 1997թ. առաջին կիսամյակում ապրանքաշրջանառությունը Վրաստանի հետ կազմում էր 19.5 մլն, այն դեպքում երբ այդ նույն ցուցանիշը Ռուսաստանի դեպքում կազմեց 86.5 մլն, իսկ Թուրքմենստանի դեպքում՝ 50.1 մլն ԱՄՆ դոլար: Նշենք նաև, որ Վրաստանի հետ արտաքին առևտրային հարաբերություններում Հայաստանից արտահանման բաժինը կազմում է արտահանման ամբողջ ծավալի միջին հաշվով 4-5%-ը, իսկ ներմուծումը՝ 3-4%-ը[15]:

Վերոնշյալը հիմնականում բացատրվում է այդ երկրներից էներգակիրների առաքումներով և դրանց դիմաց, գոնե մասամբ, ապրանքների առաքումների հաշվին վճարելու Հայաստանի ձգտումով: Այդ իսկ պատճառով Հայաստանը չի ունենում այնպիսի ապրանքատեսակներ, որոնք անհրաժեշտ են Վրաստանին, և որոնք ունեն պահանջարկ համաշխարհային շուկաներում (վերաարտահանման համար): Իսկ Վրաստանը, տնտեսության ճգնաժամային պայմաններում, ընդունակ է Հայաստան առաքել միայն մի քանի մթերքների տեսակների՝ այն էլ սահմանափակ քանակով:

Հայ-վրացական տնտեսական հարաբերությունների խնդիրների շարքում մեծ տեղ են զբաղեցնում Հայաստանի նկատմամբ Վրաստանի ունեցած պետական պարտքի վերածնակերպման հետ կապված հարցերը: 2001թ. հունվարի

---

[14] Հատկանշական է, որ գազամուղի վրա իրականացվող դիվերսիաները զգալիորեն կրճատվեցին Ղարաբաղում ռազմական գործողությունների դադարեցումից հետո (1994թ. մայիսին):

[15] Sb'u Statistical Jear of Georgia: 1997-2000, State Department for Statistics of Georgia, Tbilisi, 2000., p. 258-261.

1-ի դրությամբ Հայաստանի նկատմամբ Վրաստանի պետական պարտքի մնացորդը կազմում է 19.6 մլն ԱՄՆ դոլար[16]: Սակայն 2001թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ վրացական կողմը կատարել է ընդամենը 400 հազ. ԱՄՆ դոլար գումարի վճարում[17]:

Անդրադառնալով հայ-վրացական տնտեսական փոխհարաբերություններին՝ հարկ է նաև հիշատակել, որ կողմերի միջև մինչ օրս կնքվել են տնտեսական ոլորտին առնչվող շուրջ 35 պայմանագրեր ու համաձայնագրեր: Դրանցից առավել կարևորներն են. «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման մասին» (17.07.1992թ.), «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» (14.08.1995թ.) համաձայնագրերը, «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև տնտեսական հարաբերությունների հիմունքների մասին» հռչակագիրը (19.05.1993թ.) և այլն[18]: Այնուամենայնիվ, ընդգծելով 1990-ական թվականների ընթացքում տնտեսական ոլորտում ստեղծված ծանրակշիռ իրավապայմանագրային հենքի կարևորությունը՝ փաստենք, որ ոչ լրիվ չափով են իրացվում մի շարք համաձայնագրերից և փոխադարձ պայմանավորվածություններից բխող դրույթները:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, կցանկանայինք նշել, որ միայն տնտեսական հարաբերություններում առկա խնդրահարույց հարցերի համալիր լուծման և իրականացման միջոցով հնարավոր կլինի էլ ավելի խթանել ու աշխուժացնել հայ-վրացական առևտրատնտեսական կապերը, որոնք, իրենց հերթին, դրական ազդեցություն կունենան Հայաստանի տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործընթացների վրա: Ուստի հետագայում նույնպես Հայաստանի և Վրաստանի իշխանությունները պետք է առավել մեծ ուշադրություն դարձնեն տնտեսական համագործակցությանը:

---

[16] «Վրաստան», 24.02.2001:

[17] Տե՛ս Տեղեկանք Հայաստանի Հանրապետության նկատմամբ Վրաստանի ունեցած պետական պարտքի վերաբերյալ, *ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ընթացիկ արխիվ*, ե., 2001, էջ 2:

[18] Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու (1991-1995թթ.), *ՀՀ ԱԳՆ պաշտոնական տեղեկագիր*, N 1, ե., 2002, էջ 127-163: